

ՀՈԳԵԽՈՐ ԴՊՐՈՑՔ

ՀԱՄԱՍՏԱՆԻ ԵԽ ԴԱՅԱ - ՔԻԼԻՍՈՅ

Հետեւեալ զրութիւնը անկողմնասելը
ողով կը հրատարակեմք:

ԽԾԱՀՀՅՈՒ-ՌԵԱՆ ԵՐԱՐԱՐ ԵՀԱՀՀՅՈՒ.

Այս ամսոյս 22ին Եղէքսանդրապօլէն անձնական գործով թիֆլիս գնալուս ժամանակն հասնելով Համամլու փողին, իջևանեցայ հիւրասէր մարդու մը տուն, ուր փոքր ինչ հանգստանալէն և զիս տեսութիւն եկող քանի մի պատուառոր անձնաց հետ բաւական խօսակցելէն յետոյ, տանուտիրոջ սեղանին վերայ տեսայ յանկարծ այս տարուայ Յունուար ամսոյ Աքրատ ամսաթիրթն, և առանց վայրկեան մը կորցնելոյ վեր առի ձեռքս և սկսայ աչքէ անցունել:

Նորա մէջ բնականարար աւելի ուշադրութիւնս գարձրեց Ա. Վ. Յ. Երտազեանցի նոյն Համամլուի զպրոցի վերայ զրած յօդուածը, որն որ թէպէտ մէկ անհասկանալի և վերացական մաքով զրուած բան մըն էր, այլ այսու ամենայնիւ կարողացայ հասկանալ, որ իրը թէ Համամլուի մէջ վեց տարէն ի վեր կայ եղեր մէկ զպրոց, որ բացմանէն սկսեալ մինչեւ այն օրն խանդարեալ զրութեան մէջ է եղեր, Հողարարձուաց շատութեանց և անհամաձայնութեանց պատճառաւ, և թէ այս վերջին ժամանակներն Եղէքսանդրապօլու Հոդ. Կառավարութեան անդամ Յ. Քահանայն, իրեւ նախապատճառ նոյն զպրոցին, եկած բարեկարդած և մէկ ընտիր վարժապետ է վարձած, որով և Պ. Երտազեանց քաջայշոյ լինելով, որ այնուհետեւ արթուն հոդատարի ձեռքով այն ուսումնարանն հսկայագայլ առաջ պիտի երթայ, և այն առաջինի քահանային արած բարեկարգութիւնը լրութեան տախն իւր խոճին վրայ ծանր գալով, իւրեան սուրբ պարտաւորութիւն էլ համարած ազգային Ամսաթիրթի միջոցաւ հրատարակելի ի դիտութիւն Եզգին:

Այս յօդուածն կարդալէն վերջը, սկսայ յանդիմանել մօսս նստող մարդիկն իւրեանց զպրոցի այնքան ժամանակեայ խանդարման պատճառաւ

և լն. բայց խօսքս դեռևս չը վերջացրած՝ ամենքն միասին զարմանալով ասացին՝ սուտ են զրել այդ տեղ. և նոցա մէջն մէկը, որ զրագէտ էր և հոգաբարձու իսկ նոյն զպրոցին, պատմեց, որ այն ուսումնարանն Պարաքիլիսոյ և Զալալօղլոյ դպրոցների հետ միասին հիմնուած են 1852 թուականին Մեծապատիւ Գէորգ և Միքայէլ Խանաղեանց եղբարց ձեռքով, Համամլու՝ օժանդակութեամբ Մկրտիչ Ա. Քահանային Տէր Կարապետեանց և մասնակցութեամիւ ումանց ժողովրդականաց Ա. Արաքիլիսոյ՝ օժանդակութեամբ Կարապեա Քահանայի Տէր Գրիգորեանց նցյնպէս մասնակցութեամբ ժողովրդականաց ումանց, իսկ Զալալօղլունը չը զիտեմ բնչպէս Պատմեց նոյնպէս, որ այն ուսումնարանն մինչև 1869 թուականը կառավարած է Պ. Միքայէլ Խանաղեանն օժնականութեամբ Մկրտիչ Ա. Քահանային՝ լարարեկարգութեամբ, իսկ 1869 թուականէն սկսեալ նոյն հիմնադիրն իւր առաջազրութեանն և Ա. Ա. Հայփառ Կաթողիկոսին Կոնդակով Հաստատութեանն համեմատ կը կառավարէ օվնութեամբն վեց հոգաբարձուաց, որոց երկուսն քահանայք և չորսն աշխարհականք են, և թէ այս ուսումնարանց հաստատութեանց և բարեկարգ կառավարութեանց համար Պ. Հիմնադիրն արժանացած է ուշադրութեան Բարձրագոյն Խիսանութեան և օրհնութեան Կոնդակաց հանդուցեալ Նիկոսէ և Մատթէոս Կաթողիկոսաց՝ և ի վերջումն Նորին Ա. Ե. Հայփառութեան Տեառն Գէորգայ Պի. և անցեալ Օգոստոս ամսոյն Նորին Կայսերական Սեծութիւնն Փոխարքային Կովկասու Զալալօղլու գործոցն այցելութեան գնացած ժամանակը Երեանու Ասմեմապատիւ Նահանգապետին (Գուրելնատօր) առաջազրութեամբն այս ուսումնարանց համար և առաջամարտ չնորհակալութիւն է մասուցեր Պ. Խանաղեանցին. Ռւբեմն, ասաց Պ. Հոգաբարձուն, այսքանէն կարող էք հաւասարի լինել Պ. Երտազեանի վայրարանութեանն. միայն այս ևս չենք կարող ուրանալ՝ անաց, որ այս վերջին վարժապետի (որ այդ յօդուածի զրողն է.) ընտրութեան մէջ սղալուած ենք եղել:

Այժմ գանք Բարեկ. Յովեէփ Քահանային արած բարեկարգութեան վերայ խօսկու, որ լաւակա-

նին հետաքրքրական բան է, Բարեկ. Քահանայն Համամշտ զիւղով անցնելով իջևաներ է մեկ տեղ և մօտը եկող մարդկանցին լսելով, որ վարժապետն միշտ Բաքոսի կենացն կ'դարտակէ, կանչն չի կուտայ իւր մօտ այն զբութեան մէջ, որ ուտքի վերայ կանգնելն կը զժուարանայ, և նորանէ ստորագրութիւն կառնու, որ միւսանգամ այնքան չ'լիմէ՝ որ ինքն զինքն մոռանայ. Այս է ահա նոյն քահանային աշխատանքը. Եւ ովէ է այն ընտիր վարժապետն, որ վարձուած է, և որոյ հոգաստարութեամին ուսումնարանն հօկայքայլ առաջ պիտի երթայ, եմէ ոչ այն տարաբաղդ յօդուած զրող և չափաւոր խմելու. Համար ստորագրութիւն տուող Արտազեանն, որոյ արբեցողութեան համար Պ. Խանադինանցը որպէս զիսաւոր վերատեսուչ և հիմնադիր ուսումնարանին զրած է եղել հոգարձուաց արտաքսել զարոցէն, իսկ Հակառակ կանոնի և Հակառակ Վեհափառ Կաթողիկոսի Կոնդակին միջամտեալ է այլ ոք այն ուսումնարանի կարգադրութեան մէջ, որոյ լիսկատար իրաւունքը Վեհափառ Հայրապետն յանձնած է յիշեալ պարոնին. Բայց թէ այսպիսի զըրպարտութիւնն, զօր զրել է Պ. Արտազեանցը Յովսէփ քահանային դէմ՝ բաւականին կարծեամ զժուար զայ Արժ. Հօրն, և սոյն ամսազրի միջոցով արդարանալն և Արտազեանցի ստութիւնն ի գորս հանելն իրան մեծ պարտք համարի. այսու ամենայնիւ պյտ իւր կամքն է:

Մոռացայ ասել, որ Պ. Արտազեանցը ստորագրութիւնն տալէն յետոյ՝ զաւաթը թողած չափով է սկսած խմել, և զիշերներն չ'կարողանալով վրադառնալավ իւր սենեակն՝ զինեվաճառաց մօտ է քնելիս եղեր. այսպէս քանի մի ժամանակ շարունակելէն յետոյ՝ քանի մի մարդէ կարողացեր է զրամներ առնել փոխարինարար, իբր թէ ուսումնարանէն իւր ոռձիկը ստանալէն յետոյ կ'տայ, և անցայտացեր է, կ'ասեն ոմանք, իբր թէ ի թիֆիս:

Պատմեցին նոյնպէս՝ որ այս մի քսնի օրերս Պ. Խանադինանցն եկեր է Համամշտ ուսումնարանի հաշիւներն կարգի բերել, և վերադարձել է Պահապիլիսայ, այնտեղի ուսումնարանի հաշիւներն և բաքիլիսայ, այնտեղի ուսումնարանի հաշիւներն և բաքիլիսայ, որ շուտով ու արդէքը, և միանգամայն տեսնելու, խոստանալով որ շուտով ուղարկէ մէկ

լաւ վարժապետ, միայն մինչեւ նորա գալը պիտի երկու մեծ աշակերտ կառավարին, որպէս զի ուսումնարանի գուուը ըս փակուի. Այս էր ահա Համամշտութիւնի ուսումնարանի վերայ ստացած տեղեկութիւն:

Միւս առաւօտը Ճանապարհս շարունակեցի և ժամը 10ին հասայ Պարաքիլիսայ զիւղն, որ առաջին պարտը եղել այնտեղի ուսումնարանին այցելութիւն գնալ. Մէկ ժամէն աւելի մնացի ուսումնարանի մէջ. աշակերտաց երեսին պարկեցած թիւնը կը փայլէր, և պարզ համարձակախոսաւութիւնը ցցց կտար իւրեանց դաստիարակաց արժանաւորութիւնը. Հայոց զիւղական ուսումնարանների մէջ հազիւ թէ զտնուի մէկ այնպիսի ուսումնարան, որոյ աշակերտներն կարողանան այսպէս կարգալ Ռուսերէն և թարգմանել համարձակ. Ճարտար Էին նոյնպէս Հայոց լիզուի, Կրօնազիտութեան, Սրբազան և Հայոց Պատմութեան մէջ, զրութիւններն Հայերէն և Ռուսերէն նոյնպէս բաւական գեղեցիկ էին. ահա այսպէսուական ժամանակ ուսումնարանի մէջ մնալէն յետոյ ուրախութեամբ սրտի զուրս եղայ, յայտնելով իմ խորին շնորհակալութիւնն Պ. Հիմնադրաց և Կառավարչաց, նմանապէս վարժապետաց Բարեկ. Արսէն քահանայ Տէր Սիմէօնեանցին և Պ. Խանադառնանցին իւրեանց անխոնջ աշխատութեանն Ազգի որուոց համար:

Աստուած տայ որ Պ. Խանադեանցի պէսներն շատանան և ապրին մեզի համար, և միւս զիւղըն այս բարի օրինակին հետևելով իւրեանց որդիքը բաղդաւորացնեն:

Տ. Պահապիլիսայի.

ՕՐԻՈՐԴԱՅ ՀԱԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ

Ի ԳՐԻԳՈՐԱԳՈՒ.

Խճիւթիւն-Ռէան Արտադադ ահաւթիւն

Մինչեւ ցայսօր լութեան մէջ մնալով չետեհալ տեղեկութիւնը, անհի աժեշտ պարտք համարեցի անձիս յերեան հանել զայն. Խննեւտաներորդ զարուս մէջ Պլիգորուպօւսց քաղաքին Հայազգի փոքրիկ հօտ ժողովուրդը արդէն Ճանաչելով ուստան յարզը ու արժէքը, և միանգամայն